

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2007թ. I եռամսյակում

ՆԱԽԱԲԱՆ

Սույն վերլուծությունը կատարվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանումներից 2007թ. I եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների վերաբերյալ ստացված տվյալների և հանրապետության անշարժ գույքի շուկայից հավաքագրված տեղեկությունների դիտարկումների հիման վրա:

2007թ. I եռամսյակում հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 1138 գործարքներ, որոնցից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2006թ. IV եռամսյակի համեմատ աճել է՝ 1,6%-ով, իսկ 2006թ. I եռամսյակի համեմատ՝ 12,3%-ով:

2007թ. I եռամսյակում հանրապետության շրջաններում գրանցված ընդհանուր գործարքները ըստ գույքի տեսակների ունեն հետևյալ բաշխվածությունը.

<i>Գույքի տեսակները</i>	<i>Հանրապետությունում</i>
<i>Բազմաբնակարան բնակելի շենքի բնակարաններ</i>	<i>257</i>
<i>Առանձնատներ</i>	<i>257</i>
<i>Այգևտնակներ</i>	<i>0</i>
<i>Արտադրական նշանակության օբյեկտներ</i>	<i>64</i>
<i>Հասարակական նշանակության օբյեկտներ</i>	<i>219</i>
<i>Ավտոտնակներ</i>	<i>20</i>
<i>Հողեր</i>	<i>321</i>
<i>Ընդ. գործարք</i>	<i>1138</i>

2007թ. I եռամսյակում, IV եռամսյակի 2006թ. համեմատ ընդհանուր գործարքների նվազում է արձանագրվել Ստեփանակերտում, Ասկերանի և Քաշաթաղի շրջաններում, իսկ 2006թ. I եռամսյակի համեմատ Ասկերանի, Մարտունու, Հադրութի և Քաշաթաղի շրջաններում:

2007թ. I եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում բարձր տոկոսաչափը կազմել են առուվաճառքի՝ 23,7%, ցածրը՝ 1,8% օգտագործման գործարքները:

**Հանրապետության անշարժ գույքի նկատմամբ իրավունքների
պետական գրանցումներ**

2007թ. I եռամսյակում հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 1138 գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումներ: Այդ քանակների փոփոխումներն ըստ Ստեփանակերտ քաղաքի և շրջանների 2006,2007թթ. I եռամսյակում և 2006թ. IV եռամսյակում, ունեն հետևյալ բաշխվածությունը.

	<i>I եռամսյակ 2006թ.</i>	<i>փոփոխումը</i>	<i>I եռամսյակ 2007թ.</i>	<i>փոփոխումը</i>	<i>IV եռամսյակ 2006թ.</i>
Ստեփանակերտ	422	19,0%	502	-12,7%	575
Ասկերան	150	-18,0%	123	-19,1%	152
Մարտունի	210	-14,3%	180	24,1%	145
Մարտակերտ	36	3,1 անգամ	113	37,8%	82
Հադրութ	67	-9,0%	61	35,6%	45
Շուշի	79	63,3%	129	59,3%	81
Քաշաթաղ	49	-38,8%	30	-25,0%	40
Հանրապետություն	1013	12,3%	1138	1,6%	1120

2006թ. I եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում բարձր տոկոսաչափը կազմել է առավաճառքի` 23,7% (2006թ. IV եռամսյակում` 24,2%), ցածրը` 1,8% օգտագործման (2006թ. IV եռամսյակում` 0,8%) գործարքները:

Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի առավել բարձր տոկոսաչափն արձանագրվել է Ստեփանակերտում` 44,1% (2006թ. IV եռամսյակում` 2006 թ` 51,3%), իսկ ցածրը` 2,6% Քաշաթաղի (2006թ. IV եռամսյակում` 3,6%) շրջանում:

2006,2007թթ. I եռամսյակներում և 2006թ. IV եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխություններն ըստ անշարժ գույքի առանձին տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.


N N	<i>Անշարժ գույքի տեսակները</i>	<i>Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակները</i>				
		<i>I եռամսյակ 2006թ.</i>	<i>փոփոխումը</i>	<i>I եռամսյակ 2007թ.</i>	<i>փոփոխումը</i>	<i>IV եռամսյակ 2006թ.</i>
1	<i>բազմաբնակարան շենքի բնակարան</i>	219	17,4%	257	1,6%	253
2	<i>առանձնատուն</i>	222	15,8%	257	-8,2%	280
3	<i>արտադրական նշ. օբյեկտ</i>	54	18,5%	64	16,4%	55
4	<i>հասարակական նշ. օբյեկտ</i>	137	59,9%	219	6,3%	206
5	<i>ավտոտնակ</i>	23	-13,0%	20	42,9%	14
6	<i>հող</i>	358	-10,3%	321	2,9%	312
	Ընդամենը անշարժ գույք	1013	12,3%	1138	1,6%	1120


Ինչպես երևում է աղյուսակից, 2007թ. I եռամսյակում 2006թ. IV եռամսյակի համեմատ՝ պետական գրանցումների քանակի նվազում է գրանցվել բնակելի տների նկատմամբ, իսկ 2006թ. I եռամսյակի համեմատ՝ ավտոտնակների և հողամասի նկատմամբ:

2006,2007թթ. I եռամսյակներում և 2006թ. IV եռամսյակում հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գրանցումները ըստ գործարքների տեսակների ունեն հետևյալ բաշխվածությունը.

Գործարքների տեսակները	I եռամսյակ 2006թ.	փոփոխումը	I եռամսյակ 2007թ.	փոփոխումը	IV եռամսյակ 2006թ.
Առուվաճառք	161	67,7%	270	-0,4%	271
Նվիրատվություն	66	6,1%	70	20,7%	58
Վարձակալում	264	-36,4%	168	-2,9%	173
Գրավադրում	115	24,3%	143	-10,6%	160
Ժառանգություն	77	-29,9%	54	-43,2%	95
Օգտագործում	1	20,0 անգամ	20	2,2 անգամ	9
Սեփականաշնորհում	121	24,8%	151	21,8%	124
Մասնավորեցում	70	30,0%	91	44,4%	63
Առաջնային գրանցում	138	23,9%	171	2,4%	167
Ընդամենը գործարք	1013	12,3%	1138	1.6%	1120


Ստորև ներկայացվել են հանրապետությունում 2007թ. I եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի համեմատական փոփոխությունների գրաֆիկական պատկերումները.






N	Գործարքների տնտեսակները	Ստեփանավերտ	Ասկերան	Մարտունի	Մարտավերտ	Վարդուբ	Շուշի	Զաջուբադ	Գանդակաղբաղ	Սոկոտաշափղ
1	ԱՌՈՒՎԱՃԱՌՔ	97	40	38	29	22	41	3	270	23,7
2	ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ	46	7	7	2	1	5	2	70	6,2
3	ՎԱՐՁԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	28	34	39	17	19	7	24	168	14,8
4	ԳՐԱՎԱԴՐՈՒՄ	96	18	22	0	2	5	0	143	12,6
5	ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ	35	5	10	1	3	0	0	54	4,7
6	ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ	1	0	10	1	0	8	0	20	1,8
7	ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐԿՈՒՄ	77	4	21	15	1	33	0	151	13,3
8	ՄԱՄՆԱՎՈՐԵՑՈՒՄ	36	1	2	35	3	14	0	91	8,0
9	ԱՌԱՋՆԱՅԻՆ ԳՐԱՆՑՈՒՄ	86	14	31	13	10	16	1	171	15,0
	ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ	502	123	180	113	61	129	30	1138	100,0
	Տոկոսաչափը	44,1	10,8	15,8	9,9	5,4	11,3	2,6	100,0	


N N	Անշարժ գույքի տնտեսական արժեք	Ստեփանապոլի	Ասկերան	Մարտունի	Մարտակերտ	Վարդաշեն	Շուշի	Քաջաթաղ	Կանխավճարվածություն	Տեղաբաշխում
1	Բնակարան	176	1	10	16	2	52	0	257	22,6
2	Բնակելի տուն	115	21	56	19	13	28	5	257	22,6
3	Այգևտնակ	0	0	0	0	0	0	0	0	0,0
4	Ավտոտնակ	20	0	0	0	0	0	0	20	1,8
5	Արտադ. նշ. օբյ.	12	15	5	15	12	1	4	64	5,6
6	Վասար. նշ. օբյ.	98	16	37	23	9	34	2	219	19,2
7	Հող	81	70	72	40	25	14	19	321	28,2
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ		502	123	180	113	61	129	30	1138	100,0
Տեղաբաշխում		44,1	10,8	15,8	9,9	5,4	11,3	2,6	100,0	




**Բազմաբնակարան շենքերի բնակարանների նկատմամբ
իրականացված գործարքներից ծագող իրավունքների
պետական գրանցումների քանակների փոփոխման դինամիկա**




**Բազմաբնակարան շենքերի բնակարանների նկատմամբ
իրականացված գործարքներից ծագող իրավունքների պետական
գրանցումների քանակական համեմատություն**




**Բնակելի տների /առանձնատների/ նկատմամբ
իրականացված գործարքներից ծագող իրավունքների
պետական գրանցումների քանակների փոփոխման դինամիկա**




**Բնակելի տների /առանձնատների/ նկատմամբ իրականացված
գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների
քանակական համեմատություն**




**Հասարակական նշանակության օբյեկտների նկատմամբ
իրականացված գործարքներից ծագող իրավունքների
պետական գրանցումների քանակների փոփոխման դինամիկա**




**Հասարակական օբյեկտների նկատմամբ իրականացված
գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների
քանակական համեմատություն**





**Արտադրական նշանակության օբյեկտների նկատմամբ
իրականացված գործարքներից ծագող իրավունքների
պետական գրանցումների քանակների փոփոխման դինամիկա**




**Արտադրական նշանակության օբյեկտների նկատմամբ
իրականացված գործարքներից ծագող իրավունքների
պետական գրանցումների քանակական համեմատություն**






**Ավտոտնակների նկատմամբ իրականացված գործարքներից
ծագող իրավունքների պետական գրանցումների
քանակների փոփոխման դինամիկա**



**Ավտոտնակների նկատմամբ իրականացված գործարքներից
ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական
համեմատություն**



1. Անշարժ գույքի առուվաճառքի գործարքներ

2007թ. I եռամսյակում հանրապետությունում իրականացվել են 270 առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումներ, որոնց քանակը 2006թ. IV եռամսյակի՝ համեմատ նվազել է՝ 0,4%-ով, իսկ 2006թ. I եռամսյակի համեմատ աճել է՝ 67,7%-ով: Առուվաճառքի գործարքների գրանցումները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 23,7%-ը (2006թ. IV եռամսյակում՝ 24,2 %):

Առուվաճառքի գործարքների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Ստեփանակերտում՝ 35,9% (2006թ. IV եռամսյակում՝ 47,6%), իսկ ցածրը՝ 1,1% Քաշաթաղի (2006թ. IV եռամսյակում՝ 2,2%) շրջանում:

2006,2007թթ. I եռամսյակներում և 2006թ. IV եռամսյակում Ստեփանակերտ քաղաքում և հանրապետության շրջաններում առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակների փոփոխություններն ունեն հետևյալ բաշխվածությունը.


	<i>I եռամսյակ 2006թ.</i>	<i>փոփոխումը</i>	<i>I եռամսյակ 2007թ.</i>	<i>փոփոխումը</i>	<i>IV եռամսյակ 2006թ.</i>
Ստեփանակերտ	111	-12,6%	97	-24,8%	129
Ասկերան	12	3,3 անգամ	40	-25,9%	54
Մարտունի	16	2,4 անգամ	38	81,0%	21
Մարտակերտ	2	14,5 անգամ	29	93,3%	15
Հաղբույթ	9	2,4 անգամ	22	2,0 անգամ	11
Շուշի	11	3,7 անգամ	41	17,1%	35
Քաշաթաղ	0	3-ով ավել	3	-50,0%	6
Հանրապետություն	161	67,7%	270	-0,4%	271

2006,2007թթ. I եռամսյակներում և 2006թ. IV եռամսյակում անշարժ գույքի առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակները և նրանց փոփոխումներն ըստ անշարժ գույքի առանձին տեսակների ունեն հետևյալ բաշխվածությունը.

N	<i>Անշարժ գույքի տեսակները</i>	<i>Առուվաճառքի գործարքների քանակները</i>				
		<i>I եռամսյակ 2006թ.</i>	<i>փոփոխումը</i>	<i>I եռամսյակ 2007թ.</i>	<i>IV եռամսյակ 2006թ.</i>	
1	<i>բազմաբնակարան շենքի բնակարան</i>	52	0,0%	52	-28,8%	73
2	<i>առանձնատուն</i>	41	65,9%	68	13,3%	60
3	<i>արտադրական նշ. օբյեկտ</i>	5	4,2 անգամ	21	7,0 անգամ	3
4	<i>հասարակական նշ. օբյեկտ</i>	19	2,5 անգամ	48	-18,6%	59
5	<i>ավտոտնակ</i>	2	50,0%	3	-25,0%	4
6	<i>հող</i>	42	85,7%	78	8,3%	72
	Ընդամենն անշարժ գույք	161	67,7%	270	-0,4%	271

Առուվաճառքի գործարքների հիմնական մասը՝ 35,9%-ը, գրանցվել է Ստեփանակերտում (IV եռամսյակում 2006թ.՝ 47,6%): Առուվաճառքի գործարքներից բարձր տոկոսաչափ են կազմում բազմաբնակարան շենքերի բնակարանների և բնակելի տների նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակները՝ համապատասխանաբար 19,3%-ը և 25,2%-ը:


**Անշարժ գույքի առուվաճառքի գործարքներից ծագող
իրավունքների պետական գրանցումների քանակների
փոփոխման դինամիկաների համադրումը**



**Անշարժ գույքի առուվաճառքի գործարքներից
ծագող իրավունքների պետական գրանցումների
քանակների փոփոխման դինամիկա**



N N	Անշարժ գույքի տնտեսականները	Ստեփանավանք	Ասկերան	Մարտունի	Մարտավանք	Հաղուբ	Շուշի	Քաջաթաղ	Հանրապետություն	Տեղաբնակչություն
1	Բնակարան	38	0	0	3	0	11	0	52	19,3
2	Բնակելի տուն	22	6	14	5	5	13	3	68	25,2
3	Այգևտնակ	0	0	0	0	0	0	0	0	0,0
4	Ավտոտնակ	3	0	0	0	0	0	0	3	1,1
5	Արտադ. նշ. օբյ.	2	5	3	0	10	1	0	21	7,8
6	Հասար. նշ. օբյ.	13	9	16	1	5	4	0	48	17,8
7	Հող	19	20	5	20	2	12	0	78	28,9
ԱՆՇԱՐՃ ԳՈՒՅՔ		97	40	38	29	22	41	3	270	100,0
<i>Տեղաբնակչություն</i>		35,9	14,8	14,1	10,7	8,1	15,2	1,1	100,0	



1.1 Բազմաբնակարան շենքերի բնակարանների և անհատական բնակելի տների /առանձնատների/ առուվաճառքի գործարքներ

2007թ. I եռամսյակում հանրապետությունում բազմաբնակարան շենքերի բնակարանների նկատմամբ իրականացվել են 52 առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումներ, որոնց քանակը 2006թ. IV եռամսյակի համեմատ նվազել է՝ 28,8%-ով, իսկ 2006թ. I եռամսյակի համեմատ՝ չի փոխվել: Բազմաբնակարան շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների բարձր տոկոսաչափը գրանցվել է Ստեփանակերտում՝ 73,1 % (2006թ. IV եռամսյակում՝ 80,8%):

2006թ.IV և 2007թ.I եռամսյակներում հանրապետության մի շարք քաղաքային համայնքներում վաճառված բազմաբնակարան բնակելի տների բնակարանների առուվաճառքների գործարքների պայմանագրային գների, մեր կողմից կատարված հարցումների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջին գները և նրանց փոփոխման սահմանները.


<i>Քաղաքներ</i>	<i>2006թ. IV եռամսյակ</i>			<i>2007թ. I եռամսյակ</i>			<i>փոփոխումը 2006թ. IV եռամսյակի նկատմամբ</i>
	<i>1 քմ արժեքը /\$/</i>			<i>1 քմ արժեքը /\$/</i>			
	<i>նյութածրային</i>	<i>նյութածրիկառու</i>	<i>միջին</i>	<i>նյութածրային</i>	<i>նյութածրիկառու</i>	<i>միջին</i>	
Ստեփանակերտ	330.0	410.0	370.0	372.0	460.0	416.0	12,4%
Ասկերան	89.0	105.0	97.0	96.0	119.0	107.5	10,8%
Մարտունի	95.0	107.0	101.0	99.0	123.0	111.0	9,9%
Մարտակերտ	40.0	62.0	51.0	44.0	67.0	55.5	8,8%
Հաղրութ	51.0	74.0	62.5	55.0	80.0	67.5	8,0%
Շուշի	63.0	72.0	67.5	66.0	85.0	75.5	11,8%

2007թ. I եռամսյակում հանրապետությունում առանձնատների նկատմամբ իրականացվել են 68 առուվաճառքների գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումներ, որոնց քանակը 2006թ. IV եռամսյակի համեմատ աճել է՝ 13,3%-ով, իսկ 2006թ. I եռամսյակի համեմատ՝ 65,9%-ով:


Առանձնատների առուվաճառքների գործարքների քանակի բարձր տոկոսաչափը գրանցվել է Ստեփանակերտում՝ 32,3% (2006թ. IV եռամսյակում՝ 45,0%):

2006թ. IV և 2007թ.I եռամսյակներում հանրապետության մի շարք քաղաքային համայնքներում վաճառված բնակելի տների առուվաճառքների գործարքների պայմանագրային գների, մեր կողմից իրականացված անշարժ գույքի շուկայի դիտարկումների արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական նվազագույն, առավելագույն և միջին գները ու նրանց փոփոխումները .


Քաղաքներ	2006թ. IV եռամսյակ			2007թ. I եռամսյակ			փոփոխումը 2006թ. IV եռամսյակի նկատմամբ
	միջինը 200 քմ շինությունք և միջինը 1000քմ տնամերձով բնակելի տան արժեքը /\$/						
	նյութաձեռքից	նյութալից առատ	նյութի	նյութաձեռքից	նյութալից առատ	նյութից	
Ստեփանակերտ	37500.0	54700.0	46100.0	40500.0	60200.0	50350.0	9,2%
Ասկերան	7700.0	8900.0	8300.0	8200.0	9700.0	8950.0	7,8%
Մարտունի	7100.0	7900.0	7500.0	7400.0	8700.0	8050.0	7,3%
Մարտակերտ	4500.0	5600.0	5050.0	4700.0	6100.0	5400.0	6,9%
Հաղբուլթ	4800.0	6100.0	5450.0	5100.0	6500.0	5800.0	6,4%
Շուշի	4800.0	6100.0	5450.0	5100.0	6700.0	5900.0	8,2%




Բազմաբնակարան շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական համեմատություն



Բնակելի տների /առանձնատների/ առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակների փոփոխման դինամիկա







1.2 Հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների առուվաճառքի գործարքներ



2007թ. I եռամսյակում հանրապետությունում հասարակական նշանակության օբյեկտների նկատմամբ իրականացվել են 48 առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումներ, որոնց քանակը 2006թ. IV եռամսյակի համեմատ նվազել է՝ 18,6%-ով, իսկ 2006թ. I եռամսյակի համեմատ աճել է՝ 2,5 անգամ: 2006թ. I եռամսյակում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 17,8%-ը գրանցվել է հասարակական նշանակության օբյեկտների նկատմամբ (2006թ. IV եռամսյակում՝ 21,8%):

Հասարակական նշանակության օբյեկտների առուվաճառքի գործարքների քանակի բարձր տոկոսաչափը գրանցվել է Մարտունու՝ 33,3% (2006թ. IV եռամսյակում՝ 37,3% Ասկերանի) շրջաններում :

2007թ. I եռամսյակում հանրապետությունում արտադրական նշանակության օբյեկտների նկատմամբ իրականացվել են 21 առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումներ, որոնց քանակը 2006թ. IV եռամսյակի համեմատ աճել է՝ 7,0 անգամ, իսկ 2006թ. I եռամսյակի համեմատ՝ 4,2 անգամ: 2007թ. I եռամսյակում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 7,8%-ը գրանցվել է արտադրական նշանակության օբյեկտների նկատմամբ (2006թ. IV եռամսյակում՝ 1,1%):

Ստորև ներկայացվում են 2007թ. I եռամսյակում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների քանակի համեմատական փոփոխությունների գրաֆիկական զմայատկերը.





2. Անշարժ գույքի նվիրատվության գործարքներ

2007թ. I եռամսյակում նվիրատվության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 6,2%-ը (2006թ. IV եռամսյակում՝ 5,2%-ը), իրականացվել են 70 նվիրատվության գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումներ, որոնց քանակը 2006թ. IV եռամսյակի համեմատ աճել է՝ 20,7%, իսկ 2006թ. I եռամսյակի համեմատ՝ 6,1%:


Նվիրատվության գործարքների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Ստեփանակերտում 65,7% (2006թ. IV եռամսյակում՝ 65,5%), ցածրը՝ 1,4 % Հաղբույթի (2006թ. IV եռամսյակում՝ 1,7%) շրջանում:

2006,2007թթ. I եռամսյակում և 2006թ. IV եռամսյակում նվիրատվության գործարքների քանակները և նրանց փոփոխումներն՝ ըստ անշարժ գույքի տեսակների ունեն հետևյալ բաշխվածությունը.


	<i>Անշարժ գույքի տեսակները</i>	<i>Նվիրատվության անշարժ գույքի քանակները</i>				
		<i>I եռամսյակ 2006թ.</i>	<i>փոփոխումը</i>	<i>I եռամսյակ 2007թ.</i>	<i>փոփոխումը</i>	<i>IV եռամսյակ 2006թ.</i>
1	<i>բ/բ շենքի բնակարան</i>	4	4,3 անգամ	17	2,1 անգամ	8
2	<i>առանձնատուն</i>	45	-55,6%	20	-16,7%	24
3	<i>արտադրական նշ. օբ.</i>	1	1-ով պակաս	0	0,0%	0
4	<i>հասարակական նշ. օբ.</i>	0	7-ով ավել	7	2,3 անգամ	3
5	<i>ավտոտնակ</i>	0	0,0%	0	0,0%	0
5	<i>հող</i>	16	62,5%	26	13,0%	23
	<i>Ընդամենը</i>	66	6,1%	70	20,7%	58

Ստորև ներկայացվում են 2007թ. I եռամսյակում անշարժ գույքի նվիրատվության գործարքների քանակի համեմատական փոփոխությունների գրաֆիկական զժապատկերը.


**Անշարժ գույքի նվիրատվության գործարքներից ծագող
իրավունքների պետական գրանցումների քանակների
փոփոխման դինամիկաների համադրումը**



**Անշարժ գույքի նվիրատվության գործարքներից
ծագող իրավունքների պետական գրանցումների
քանակների փոփոխման դինամիկա**



N N	Անշարժ գույքի տնտեսականները	Ստեփանավերտ	Ասկերան	Մարտունի	Մարտավերտ	Հարկուշ	Շուշի	Քաշաթաղ	Կանխավաճառվածներ	Տոկոսաչափը
1	Բնակարան	13	0	1	0	1	2	0	17	24,3
2	Բնակելի տուն	10	3	2	1	0	2	2	20	28,6
3	Այգևտնակ	0	0	0	0	0	0	0	0	0,0
4	Ավտոտնակ	0	0	0	0	0	0	0	0	0,0
5	Արտադ. նշ. օբյ.	0	0	0	0	0	0	0	0	0,0
6	Հասար. նշ. օբյ.	6	0	0	0	0	1	0	7	10,0
7	Հող	17	4	4	1	0	0	0	26	37,1
ԱՆՇԱՐՃ ԳՈՒՅՔ		46	7	7	2	1	5	2	70	100,0
<i>Տոկոսաչափը</i>		65,7	10,0	10,0	2,9	1,4	7,1	2,9	100,0	



3. Անշարժ գույքի գրավադրման գործարքներ

2007թ. I եռամսյակում գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 12,6%-ը (2006թ. IV եռամսյակում՝ 14,3%-ը), արձանագրվել են գրավադրման 143 գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումներ, որոնց քանակները 2006թ. IV եռամսյակի համեմատ նվազել է՝ 10,6%-ով, իսկ 2006թ. I եռամսյակի համեմատ աճել է՝ 24,3%-ով:

Գրավադրման գործարքների քանակի բարձր տոկոսաչափը արձանագրվել է Ստեփանակերտում՝ 67,1% (2006թ. IV եռամսյակում՝ 71,9%), ցածրը՝ 1,4% Հաղբույթի (2006թ. IV եռամսյակում՝ 1,3% Շուշիի) շրջաններում, իսկ Մարտակերտի և Քաշաթաղի շրջաններում գրավադրման գործարքներ չեն արձանագրվել:


2006,2007թթ. I եռամսյակներում և 2006թ. IV եռամսյակում հանրապետության շրջաններում անշարժ գույքի գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակները և նրանց փոփոխումներն ըստ անշարժ գույքի առանձին տեսակների ունեն հետևյալ բաշխվածությունը.

	Անշարժ գույքի տեսակները	Գրավադրված անշարժ գույքի քանակ				
		I եռամսյակ 2005թ.	փոփոխումը	I եռամսյակ 2007թ.	փոփոխումը	IV եռամսյակ 2006թ.
1	բ/բ շենքի բնակարան	31	67,7%	52	6,1%	49
2	առանձնատուն	21	42,9%	30	-18,9%	37
3	արտադրական նշ. օբ.	12	-8,3%	11	-56,0%	25
4	հասարակական նշ. օբ.	27	14,8%	31	-8,8%	34
5	ավտոտնակ	1	0,0%	1	1-ով ավել	0
6	հող	23	-21,7%	18	20,0%	15
	Ընդամենը	115	24,3%	143	-10,6%	160


2006,2007թթ. I եռամսյակում և 2006թ. IV եռամսյակում գրավադրման գործարքների քանակների փոփոխություններն ըստ Ստեփանակերտ քաղաքի և հանրապետության շրջանների ունեն հետևյալ բաշխվածությունը.

	I եռամսյակ 2006թ.	փոփոխումը	I եռամսյակ 2007թ.	փոփոխումը	IV եռամսյակ 2006թ.
Ստեփանակերտ	67	43,3%	96	-16,5%	115
Ասկերան	6	3,0 անգամ	18	3,6 անգամ	5
Մարտունի	34	-35,3%	22	-12,0%	25
Մարտակերտ	1	1-ով պակաս	0	6-ով պակաս	6
Հաղբույթ	5	-60,0%	2	2-ով ավել	0
Շուշի	2	2,5 անգամ	5	2,5 անգամ	2
Քաշաթաղ	0	0,0%	0	7-ով պակաս	7
Հանրապետություն	115	24,3%	143	-10,6%	160


**Անշարժ գույքի գրավադրման գործարքներից ծագող
իրավունքների պետական գրանցումների քանակների
փոփոխման դինամիկաների համադրումը**



**Անշարժ գույքի գրավադրման գործարքներից
ծագող իրավունքների պետական գրանցումների
քանակների փոփոխման դինամիկա**



N N	Անշարժ գույքի տնտեսականները	Ստեփանավերտ	Ասկերան	Մարտունի	Մարտավերտ	Վաղարշ	Շուշի	Քաշաթաղ	Վանդապետություն	Տոկոսաչափը
1	Ընտանիքային	48	0	2	0	0	2	0	52	36,4
2	Ընտանիքի տուն	20	2	6	0	1	1	0	30	21,0
3	Այգևտնակ	0	0	0	0	0	0	0	0	0,0
4	Ավտոտնակ	1	0	0	0	0	0	0	1	0,7
5	Արտադ. նշ. օբյ.	3	8	0	0	0	0	0	11	7,7
6	Վասար. նշ. օբյ.	23	4	2	0	0	2	0	31	21,7
7	Հող	1	4	12	0	1	0	0	18	12,6
ԱՆՇԱՐՇ ԳՈՒՅՔ		96	18	22	0	2	5	0	143	100,0
Տոկոսաչափը		67,1	12,6	15,4	0,0	1,4	3,5	0,0	100,0	




3.1 Բազմաբնակարան շենքերի բնակարանների և բնակելի տների /առանձնատների/ գրավադրման գործարքները

2007թ. I եռամսյակում հանրապետությունում բազմաբնակարան շենքերի բնակարանների նկատմամբ իրականացվել են 52 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումներ, որոնց քանակները 2006թ. IV եռամսյակի համեմատ աճել է՝ 6,1%-ով, իսկ 2006թ. I եռամսյակի համեմատ՝ 67,7%-ով:


2007թ. I եռամսյակում անշարժ գույքի գրավադրման գործարքների 36,4%-ը գրանցվել է բազմաբնակարան շենքերի բնակարանների նկատմամբ (2006թ. IV եռամսյակում՝ 30,6%): Բազմաբնակարան շենքերի բնակարանների գրավադրման 48 գործարքները գրանցվել են Ստեփանակերտում:

2007թ. I եռամսյակում հանրապետությունում բնակելի տների /առանձնատների/ նկատմամբ իրականացվել են 30 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումներ, որոնց քանակը 2006թ. IV եռամսյակի համեմատ նվազել է՝ 18,9%-ով, իսկ 2006թ. I եռամսյակի համեմատ աճել է՝ 42,9%-ով:

2007թ. I եռամսյակում անշարժ գույքի գրավադրման գործարքների 21,0%-ը գրանցվել է առանձնատների նկատմամբ (2006թ. IV եռամսյակին՝ 23,1%-ը): Բնակելի տների գրավադրման գործարքներից 20 գրանցվել են Ստեփանակերտում:




Բազմաբնակարան շենքերի բնակարեւների գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական համեմատություն




	Ստեփանակերտ	Ասկերան	Մարտունի	Մարտակերտ	Հաղրուբ	Շուշի	Քաշաթաղ	Հանրապետություն
2006թ. I եռամսյակ	25	0	6	0	0	0	0	31
2007թ. I եռամսյակ	48	0	2	0	0	2	0	52
2006թ. IV եռամսյակ	44	0	4	0	0	1	0	49

Բնակելի տների /առանձնատների/ գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակների փոփոխման դինամիկա



Բնակելի տների /առանձնատների/ գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական համեմատություն



3.2 Հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների գրավադրման գործարքներ

2007թ. I եռամսյակում հանրապետությունում հասարակական նշանակության օբյեկտների նկատմամբ իրականացվել են 31 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումներ, որոնց քանակը 2006թ. IV եռամսյակի համեմատ նվազել է՝ 8,8%-ով, իսկ 2006թ. I եռամսյակի համեմատ աճել է՝ 14,8%-ով:

2007թ. I եռամսյակում անշարժ գույքի գրավադրման գործարքների 21,7% գրանցվել է հասարակական նշանակության օբյեկտների նկատմամբ (2006թ. IV եռամսյակում՝ 21,3%):

Հասարակական նշանակության օբյեկտների գրավադրման գործարքների քանակի բարձր տոկոսաչափը գրանցվել է Ստեփանակերտում՝ 74,2% (23 գործարք) :


2007թ. I եռամսյակում հանրապետությունում արտադրական նշանակության օբյեկտների նկատմամբ իրականացվել են 11 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումներ, որոնց քանակը 2006թ. IV եռամսյակի համեմատ նվազել է՝ 56,0%-ով , իսկ 2006թ. I եռամսյակի համեմատ՝ 8,3%-ով :

2007թ. I եռամսյակում անշարժ գույքի գրավադրման գործարքների 7,7%-ը գրանցվել է արտադրական նշանակության օբյեկտների նկատմամբ (2006թ. IV եռամսյակում՝ 15,6%-ը):


Արտադրական նշանակության օբյեկտների գրավադրման գործարքների քանակի բարձր տոկոսաչափը գրանցվել է Ասկերանի շրջանում՝ 72,7% (8 գործարք) :



Ստորև ներկայացվում են 2007թ. I եռամսյակում անշարժ գույքի գրավադրման գործարքների քանակի համեմատական փոփոխությունների գրաֆիկական գծապատկերը.

Հասարակական նշանակության օբյեկտների գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակների փոփոխման դինամիկա



Հասարակական նշանակության օբյեկտների գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական համեմատություն





4. Անշարժ գույքի վարձակալության գործարքներ

2007թ. I եռամսյակում վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 14,8%-ը (2006թ. IV եռամսյակում՝ 15,4%), իրականացվել են վարձակալության 168 գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումներ, որոնց քանակը 2006թ. IV եռամսյակի համեմատ նվազել է՝ 2,9%-ով, իսկ 2006թ. I եռամսյակի համեմատ՝ 36,4%-ով:

Վարձակալության գործարքների քանակի բարձր տոկոսաչափը արձանագրվել է Մարտունու՝ 23,2% (2006թ. IV եռամսյակում՝ 31,2% Ասկերանի) շրջաններում, իսկ ցածրը՝ 4,2% Շուշիի (2006թ. IV եռամսյակում՝ 2,9%) շրջանում:


2006,2007թթ. I եռամսյակներում և 2006թ. IV եռամսյակում վարձակալության գործարքների քանակները և նրանց փոփոխումներն՝ ըստ անշարժ գույքի տեսակների ունեն հետևյալ բաշխվածությունը.

	<i>Անշարժ գույքի տեսակները</i>	<i>Վարձակալված անշարժ գույքի քանակները</i>				
		<i>I եռամսյակ 2006թ.</i>	<i>փոփոխումը</i>	<i>I եռամսյակ 2007թ.</i>	<i>փոփոխումը</i>	<i>IV եռամսյակ 2006թ.</i>
1	<i>բ/բ շենքի բնակարան</i>	0	6-ով ավել	6	6-ով ավել	0
2	<i>առանձնատուն</i>	0	0,0%	0	0,0%	0
3	<i>արտադրական նշ. օբ.</i>	0	8-ով ավել	8	33,3%	6
4	<i>հասարակական նշ. օբ.</i>	4	2,0 անգամ	8	-33,3%	12
5	<i>ավտոտնակ</i>	0	0,0%	0	0,0%	0
6	<i>հող</i>	260	-43,8%	146	-5,8%	155
	<i>Ընդամենը</i>	<i>264</i>	<i>-36,4%</i>	<i>168</i>	<i>-2,9%</i>	<i>173</i>

Վարձակալության գործարքների քանակների փոփոխություններն ըստ Ստեփանակերտ քաղաքի և հանրապետության շրջանների 2006,2007թթ. I եռամսյակներում և 2006թ. IV եռամսյակում ունեն հետևյալ բաշխվածությունը.


	<i>I եռամսյակ 2006թ.</i>	<i>փոփոխումը</i>	<i>I եռամսյակ 2007թ.</i>	<i>փոփոխումը</i>	<i>IV եռամսյակ 2006թ.</i>
Ստեփանակերտ	7	4,0 անգամ	28	-6,7%	30
Ասկերան	82	-58,5%	34	-37,0%	54
Մարտունի	129	-69,8%	39	-7,1%	42
Մարտակերտ	16	6,3%	17	-5,6%	18
Հաղբույ	18	5,6%	19	2,7 անգամ	7
Շուշի	3	2,3 անգամ	7	40,0%	5
Քաշաթաղ	9	2,6 անգամ	24	41,2%	17
<i>Հանրապետություն</i>	<i>264</i>	<i>-36,4%</i>	<i>168</i>	<i>-2,9%</i>	<i>173</i>

**Անշարժ գույքի վարձակալության գործարքներից ծագող
իրավունքների պետական գրանցումների քանակների
փոփոխման դինամիկաների համադրումը**




	հունվար	փետրվար	մարտ
2006թ. I եռամսյակ	63	94	107
2007թ. I եռամսյակ	63	36	69

**Անշարժ գույքի վարձակալության գործարքներից ծագող
իրավունքների պետական գրանցումների
քանակների փոփոխման դինամիկա**



	I եռամսյակ 2006թ.	I եռամսյակ 2007թ.	IV եռամսյակ 2006թ.
2006թ.	264	168	173
2007թ.	264	168	173

N	Անշարժ գույքի տեսակները	Ստեփանավերտ	Ասկերան	Մարտունի	Մարտավերտ	Վաղրաթ	Շուշի	Քաշաթաղ	Հանրապետություն	Տեղական
1	Բնակարան	1	0	1	0	0	4	0	6	3,6
2	Բնակելի տուն	0	0	0	0	0	0	0	0	0,0
3	Այգևտնակ	0	0	0	0	0	0	0	0	0,0
4	Ավտոտնակ	0	0	0	0	0	0	0	0	0,0
5	Արտադ. նշ. օբյ.	2	1	1	0	0	0	4	8	4,8
6	Վասար. նշ. օբյ.	5	1	0	0	0	1	1	8	4,8
7	Հող	20	32	37	17	19	2	19	146	86,9
ԱՆՇԱՐՃ ԳՈՒՅՔ		28	34	39	17	19	7	24	168	100,0
<i>Տեղական</i>		16,7	20,2	23,2	10,1	11,3	4,2	14,3	100,0	



4.1 Հողերի վարձակալության գործարքներ

2007թ. I եռամսյակում հանրապետությունում հողերի նկատմամբ իրականացվել են 146 վարձակալության գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումներ, որոնց քանակները 2006թ. IV եռամսյակի համեմատ նվազել է՝ 5,8 %-ով, իսկ 2006թ. I եռամսյակի համեմատ՝ 43,8%-ով: 2007թ. I եռամսյակում անշարժ գույքի վարձակալության գործարքների 86,9%-ը գրանցվել է հողերի նկատմամբ (2006թ. IV եռամսյակում՝ 89,6%):

Հողերի վարձակալության գործարքների քանակի բարձր տոկոսաչափը գրանցվել է Մարտունու՝ 25,3% (2006թ. IV եռամսյակում՝ 33,5% Ասկերանի) շրջաններում, իսկ ցածրը՝ 1,4% Շուշիի շրջանում (2006թ. IV եռամսյակում՝ 2,6%):



Հողերի վարձակալության գործարքների քանակների փոփոխություններն ըստ Ստեփանակերտ քաղաքի և հանրապետության շրջանների 2006,2007թթ. I եռամսյակներում և 2006թ. IV եռամսյակում ունեն հետևյալ բաշխվածությունը.

	<i>I եռամսյակ 2006թ.</i>	<i>փոփոխումը</i>	<i>I եռամսյակ 2007թ.</i>	<i>փոփոխումը</i>	<i>IV եռամսյակ 2006թ.</i>
Ստեփանակերտ	7	2,8 անգամ	20	-13,0%	23
Ասկերան	82	-61,0%	32	-38,5%	52
Մարտունի	129	-71,3%	37	-9,8%	41
Մարտակերտ	12	41,7%	17	0,0%	17
Հաղրութ	18	5,6%	19	2,7 անգամ	7
Շուշի	3	-33,3%	2	-50,0%	4
Քաշաթաղ	9	2,1 անգամ	19	72,7%	11
Հանրապետություն	260	-43,8%	146	-5,8%	155

2007թ-ի I եռամսյակում հանրապետությունում գրանցվել են, 1017.87 հա ընդհանուր մակերեսով, գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության 115 գործարքներ, որոնց քանակները և մակերեսները ըստ հանրապետության շրջանների ունեն հետևյալ բաշխվածությունը.

	<i>2007թ-ի I եռամսյակում վարձակալված հողերի</i>	
	<i>քանակը</i>	<i>մակերեսը /հա/</i>
Ասկերան	32	219.2
Մարտունի	40	282.0
Մարտակերտ	11	106.5
Հաղրութ	10	41.9
Շուշի	2	15.0
Քաշաթաղ	20	353.27
Հանրապետություն	115	1017.87

Հանրապետությունում անշարժ գույքի շուկայի դիտարկումները ցույց են տալիս, որ հանրապետության քաղաքներում վարձակալության համար, որպես ակտիվ անշարժ գույքի տեսակներ, հանդես են գալիս Ստեփանակերտում՝ հասարակական նշանակության օբյեկտները, իսկ շրջաններում՝ գյուղատնտեսական նշանակության հողերը:



5. Անշարժ գույքի ժառանգության գործարքներ

2007թ. I եռամսյակում ժառանգության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 4,7%-ը (2006թ. IV եռամսյակում՝ 8,5%-ը), գրանցվել են 54 ժառանգության գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումներ, որոնց քանակը 2006թ. IV եռամսյակի համեմատ նվազել է՝ 43,2%-ով, իսկ 2006թ. I եռամսյակի համեմատ՝ 29,9%-ով:


Ժառանգության գործարքների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Ստեփանակերտում՝ 64,8% (2006թ. IV եռամսյակում՝ 71,6%), ցածրը՝ 1,9% Մարտակերտի (2006թ. IV եռամսյակում՝ 1,1% Մարտակերտի, Շուշիի և Քաշաթաղի) շրջաններում, իսկ Շուշիի և Քաշաթաղի շրջաններում ժառանգության գործարքները չեն գրանցվել:

2006,2007թթ. I եռամսյակում և 2006թ. IV եռամսյակում հանրապետության մարզերում ժառանգության գործարքների քանակները և նրանց փոփոխումներն՝ ըստ անշարժ գույքի տեսակների ունեն հետևյալ բաշխվածությունը.


	<i>Անշարժ գույքի տեսակները</i>	<i>Ժառանգված անշարժ գույքի քանակները</i>				
		<i>I եռամսյակ 2006թ.</i>	<i>փոփոխումը</i>	<i>I եռամսյակ 2007թ.</i>	<i>փոփոխումը</i>	<i>IV եռամսյակ 2006թ.</i>
1	<i>բ/բ շենքի բնակարան</i>	20	-15,0%	17	-45,2%	31
2	<i>առանձնատուն</i>	54	-44,4%	30	-50,8%	61
3	<i>արտադրական նշ. օբ.</i>	1	1-ով պակաս	0	0,0%	0
4	<i>հասարակական նշ. օբ.</i>	1	1-ով պակաս	0	1-ով պակաս	1
5	<i>ավտոտնակ</i>	0	0,0%	0	2-ով պակաս	2
6	<i>հող</i>	1	7,0 անգամ	7	7-ով ավել	0
	<i>Ընդամենը</i>	<i>77</i>	<i>-29,9%</i>	<i>54</i>	<i>-43,2%</i>	<i>95</i>

Ստորև ներկայացվում են 2007թ. I եռամսյակում անշարժ գույքի ժառանգության գործարքների քանակի համեմատական փոփոխությունների գրաֆիկական գծապատկերը.


**Անշարժ գույքի ժառանգության գործարքներից ծագող
իրավունքների պետական գրանցումների քանակների
փոփոխման դինամիկաների համադրումը**



**Անշարժ գույքի ժառանգության գործարքներից
ծագող իրավունքների պետական գրանցումների
քանակների փոփոխման դինամիկա**



N N	Անշարժ գույքի տնտեսականները	Ստեփանակերտ	Ասկերան	Մարտունի	Մարտակերտ	Հարրուբ	Շուշի	Քաշաթաղ	Հանրապետություն	Տոկոսաչափը
1	Բնակարան	16	0	1	0	0	0	0	17	31,5
2	Բնակելի տուն	19	4	3	1	3	0	0	30	55,6
3	Այգետնակ	0	0	0	0	0	0	0	0	0,0
4	Ավտոտնակ	0	0	0	0	0	0	0	0	0,0
5	Արտադ. նշ. օբյ.	0	0	0	0	0	0	0	0	0,0
6	Հասար. նշ. օբյ.	0	0	0	0	0	0	0	0	0,0
7	Հող	0	1	6	0	0	0	0	7	13,0
ԱՆՇԱՐՃ ԳՈՒՅՔ		35	5	10	1	3	0	0	54	100,0
<i>Տոկոսաչափը</i>		64,8	9,3	18,5	1,9	5,6	0,0	0,0	100,0	



6. Անշարժ գույքի առաջնային գրանցումներ

2007թ. I եռամսյակում առաջնային գրանցումները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 15,0%-ը (2006թ. IV եռամսյակում՝ 14,9%), գրանցվել են 171 առաջնային գրանցումներ, որոնց քանակը 2006թ. IV եռամսյակի համեմատ աճել է՝ 2,4%-ով, իսկ 2006թ. I եռամսյակի համեմատ՝ 23,9%-ով:


Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Ստեփանակերտում՝ 50,3% (2006թ. IV եռամսյակում՝ 54,5%), իսկ ցածրը՝ 0,6%-ով Քաշաթաղի (2006թ. IV եռամսյակում՝ 2,4%-ով) շրջանում:

2006,2007թթ. I եռամսյակներում և 2006թ. IV եռամսյակում հանրապետության շրջաններում առաջնային գրանցումների քանակները և նրանց փոփոխումներն ըստ անշարժ գույքի տեսակների ունեն հետևյալ բաշխվածությունը.


N N	Անշարժ գույքի տեսակները	Առաջնային գրանցումների քանակները				
		I եռամսյակ 2006թ.	փոփոխումը	I եռամսյակ 2007թ.	փոփոխումը	IV եռամսյակ 2006թ.
1	բազմաբնակարան շենքի բնակարան	44	-47,7%	23	35,3%	17
2	առանձնատուն	34	2,1 անգամ	73	10,6%	66
3	արտադրական նշ. օբյեկտ	12	-75,0%	3	-82,4%	17
4	հասարակական նշ. օբյեկտ	38	-2,6%	37	27,6%	29
5	ավտոտնակ	8	8-ով պակաս	0	3-ով պակաս	3
6	հող	2	17,5 անգամ	35	0,0%	35
	Ընդամենն անշարժ գույք	138	23,9%	171	2,4%	167

Ստորև ներկայացվում են 2007թ. I եռամսյակում անշարժ գույքի առաջնային գրանցումների քանակի համեմատական փոփոխությունների գրաֆիկական զԺապատկերը.


**Անշարժ գույքի առաջնային գրանցումների գործարքներից
ծագող իրավունքների պետական գրանցումների քանակների
փոփոխման դինամիկաների համադրումը**



**Անշարժ գույքի առաջնային գրանցումների գործարքներից
ծագող իրավունքների պետական գրանցումների
քանակների փոփոխման դինամիկա**



N N	Անշարժ գույքի տնտեսականները	Ստեփանավերտ	Ասկերան	Մարտունի	Մարտավերտ	Հաղարթ	Շուշի	Քաշաթաղ	Կանխարձեռվածություն	Տեղաբաշխում
1	Բնակարան	20	0	1	0	0	2	0	23	13,5
2	Բնակելի տուն	31	6	14	10	4	8	0	73	42,7
3	Այգևտնակ	0	0	0	0	0	0	0	0	0,0
4	Ավտոտնակ	0	0	0	0	0	0	0	0	0,0
5	Արտադ. նշ. օբյ.	2	1	0	0	0	0	0	3	1,8
6	Հասար. նշ. օբյ.	17	1	8	1	3	6	1	37	21,6
7	Հող	16	6	8	2	3	0	0	35	20,5
ԱՆՇԱՐՃ ԳՈՒՅՔ		86	14	31	13	10	16	1	171	100,0
Տեղաբաշխում		50,3	8,2	18,1	7,6	5,8	9,4	0,6	100,0	



7. Անշարժ գույքի անհատույց սեփականաշնորհման գործարքներ



2007թ. I եռամսյակում անհատույց սեփականաշնորհման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 13,3%-ը (2006թ. IV եռամսյակում՝ 11,1%), գրանցվել են 151 անհատույց սեփականաշնորհման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումներ, որոնց քանակը 2006թ. IV եռամսյակի համեմատ աճել է՝ 21,8%-ով, իսկ 2006թ. I եռամսյակի համեմատ՝ 24,8%-ով:

2007թ. I եռամսյակում սեփականաշնորհման գործարքների քանակի բարձր տոկոսաչափը՝ 51,0% արձանագրվել է Ստեփանակերտում (2006թ. IV եռամսյակում՝ 50,8%), ցածրը՝ 0,7%-ը Նաղրութի (2006թ. IV եռամսյակում՝ 4,0% Քաշաթաղի) շրջաններում, իսկ Քաշաթաղի շրջանում գործարք չի արձանագրվել:


2006, 2007թթ. I եռամսյակներում և 2006թ. IV եռամսյակում հանրապետության մարզերում անհատույց սեփականաշնորհման գործարքների գրանցումների քանակները և նրանց փոփոխումներն՝ ըստ անշարժ գույքի տեսակների ունեն հետևյալ բաշխվածությունը.

N N	Անշարժ գույքի տեսակները	Անհատույց սեփականաշնորհման գործարքների պետական գրանցումների քանակները				
		I եռամսյակ 2006թ.	փոփոխումը	I եռամսյակ 2007թ.	փոփոխումը	IV եռամսյակ 2006թ.
1	բազմաբնակարան շենքի բնակարան	68	32,4%	90	20,0%	75
2	առանձնատուն	27	25,9%	34	6,3%	32
3	այգետնակ	0	0,0%	0	0,0%	0
4	ավտոտնակ	12	33,3%	16	3,2 անգամ	5
5	հող	14	-21,4%	11	-8,3%	12
	Ընդամենը անշարժ գույք	121	24,8%	151	21,8%	124

Ստորև ներկայացվում են 2007թ. I եռամսյակում անշարժ գույքի անհատույց սեփականաշնորհման գործարքների քանակի համեմատական փոփոխությունների գրաֆիկական գծապատկերը.



N/N	Անշարժ գույքի տնտեսականները	Ստեփանավերք	Ասկերան	Մարտունի	Մարտավերք	Վարդաթ	Շուշի	Քաջաթաղ	Դաճիկաբլուզ	Սոկոտաչավիղ
1	Բնակարան	40	1	4	13	1	31	0	90	59,6
2	Բնակելի տուն	13	0	17	2	0	2	0	34	22,5
3	Այգևտնակ	0	0	0	0	0	0	0	0	0,0
4	Ավտոտնակ	16	0	0	0	0	0	0	16	10,6
5	Վող	8	3	0	0	0	0	0	11	7,3
ԱՆՇԱՐՃ ԳՈՒՅՔ		77	4	21	15	1	33	0	151	100,0
<i>Տոկոսաչափը</i>		51,0	2,6	13,9	9,9	0,7	21,9	0,0	100,0	



8. Անշարժ գույքի մասնավորեցման գործարքներ



2007թ. I եռամսյակում գրանցվել են 91 մասնավորեցման գործարքներ, որոնց քանակը 2006թ. IV եռամսյակում համեմատ աճել է՝ 44,4%-ով, իսկ 2006թ. I եռամսյակի համեմատ՝ 30,0%-ով, մասնավորեցման գործարքներ կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների ընդհանուր քանակի 8,0%-ը (2006թ. IV եռամսյակում՝ 5,6%):

2007թ. I եռամսյակում մասնավորեցման գործարքների քանակի բարձր տոկոսաչափը՝ 39,6% արձանագրվել է Ստեփանակերտում (2006թ. IV եռամսյակում՝ 57,1%), ցածրը՝ 1,1%-ը Ասկերանի (2006թ. IV եռամսյակում՝ 1,6%) շրջանում, իսկ Քաշաթաղի շրջանում մասնավորեցման գործարքներ չեն գրանցվել:

2006,2007թթ. I եռամսյակներում և 2006թ. IV եռամսյակում հանրապետության մարզերում մասնավորեցման գործարքների գրանցումների քանակները և նրանց փոփոխումներն՝ ըստ անշարժ գույքի տեսակների ունեն հետևյալ բաշխվածությունը.

N N	Անշարժ գույքի տեսակները	Մասնավորեցման գործարքների քանակները				
		I եռամսյակ 2006թ.	փոփոխումը	I եռամսյակ 2007թ.	փոփոխումը	IV եռամսյակ 2006թ.
1	արտադրական նշ. օբյեկտ	23	-13,0%	20	6,7 անգամ	3
2	հասարակական նշ. օբյեկտ	47	51,1%	71	18,3%	60
	Ընդամենը անշարժ գույք	70	30,0%	91	44,4%	63

Ստորև ներկայացվում են 2007թ. I եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ մասնավորեցման գործարքների քանակի համեմատական փոփոխությունների գրաֆիկական գծապատկերը.



N/N	Անշարժ գույքի տնտեսականները	Ստեփանավերտ	Ասկերան	Մարտունի	Մարտավերտ	Վանք	Շուշի	Քաջաթաղ	Գյումրի քաղաքում գտնվող համայնքային տարածքներ	Նիդառացի
1	Արտադ. նշ. օբյ.	3	0	0	15	2	0	0	20	22,0
2	Հասար. նշ. օբյ.	33	1	2	20	1	14	0	71	78,0
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ		36	1	2	35	3	14	0	91	100,0
<i>Տոկոսաչափը</i>		39,6	1,1	2,2	38,5	3,3	15,4	0,0	100,0	

